

րովու յաւտարութիւն առ ի յապրումն. զհսկայաբար միւսանգամ զդարձն Տրդատայ եւ զյաղթող<sup>1</sup> մարտիւ ունելն զհերոյին զնախնեացն քաջաբար զթագաւորութիւնն. զղիմելն առ Նա<sup>2</sup> սրբոյն Գրիգորի՝ զհեշտ պաշտաման տենչիւ<sup>3</sup>, զնահատակութիւն Նորին սրբոյն, եւ թէ ո՛րպէս տարաւ անպատումն եւ անբաւ բազում չարչարանացն. զառաւելապէս աւզնականութիւնն Զրիստոսի, որ ցուցաւ ի վերայ սրբոյն, ի հիացումն դեռեւս մոլորեալ մարդկան. զհամբերութիւն տեւողութեանն այնչափ ամս ի վիրապին, ըստ կանխագետ տնտեսութեանն վերնոյն, որ պահէր զնահատակն ի գործն Հայոց. զեկս սուրբ կուսանացն ի Հռովմայեցւոց քաղաքէն, եւ զհեղումն մարտիրոսական արեանն ի Վաղարշապատ քաղաքի, յոռոգումն դալարութեան գաւսացելոց դիոց<sup>4</sup> մարդկան. զելն սրբոյն Գրիգորի ի խոր վիրապէն, եւ զհանումն Հայաստան աշխարհիս ի խաւարէ անգիտութեանն յաստուածային արքայութեանն լոյս. զյորդորումն յայնմիեւտ վարդապետութեան կենաց աշխարհիս<sup>5</sup> Հայոց. զկտակս<sup>6</sup> մկրտութեան լուսոյ, զոր Փրկիչն Զրիստոս ի ձեռն մեծի Նահատակին Գրիգորի, բարեխաւսութեամբ եւ սուրբ<sup>7</sup> կուսանացն, ծաւալեցոյց յաշխարհիս մերում. զշինութիւն եկեղեցեաց, զպայծառութիւն քահանայից, զխումբս բազմամբոյս ժողովրդոց ի տաւնս Փրկչին եւ ի ժողովմունս<sup>8</sup> յիշատակաց սրբոց: 3 Չայս ամենայն, եւս առաւել քան զսոյն գիտութիւն, յիւրում հաստատուն եւ անսխալ կարգադրութիւնսն<sup>9</sup> պատմեաց մեզ երանելի այրն Աստուծոյ սուրբն<sup>10</sup> Ագաթանգեղոս:

**Գ.** Իսկ զհետ սորա, ըստ այլայլման իրաց եւ ժամանակաց եւ դիպելոյ աշխարհիս Հայոց բազմամբոյս դարուց, երբեմն խաղաղութեան եւ երբեմն սաստիկ եւ անբաւ շփոթմանց, միաբանութեան առ միմեանս եւ երկպառակութեամբ ճեղքելոյ ի միմեանց՝ կալ ոմանց ըստ աստուածային հրամանատուութեան<sup>11</sup> ի հնազանդութիւն բնիկ իւրեանց Արշակունի թագաւորացն, եւ այլոց ծառայել կամաւ անտար թագաւորացն՝ ի կորուստ անձանց եւ աշխարհիս. որք ի միաբանելն տեսանէին զԱստուծոյ աւզնականութիւնն յան-

1 SS. զյաղթող. 2. *Խառն ո եւ օ գրութիւն*

2 SS. զղիմելն ի նմա: - 2. *Նախ զղիմել նմա, յետոյ ուղղած՝ զղիմելն ի նմա. այսպէս՝ ըստ Ճառ.*

3 2. *Նախ՝ տենչի, ապա՝ ուղղած այսպէս. թերեւս՝ ըստ հեշտ պաշտաման տենչի*

4 *Թերեւս՝ ոգւոց (ոգիոց)*

5 *Թերեւս՝ յաշխարհիս (Ն. Բ.)*

6 *Թերեւս՝ զկտակս (Ն. Բ.)*

7 SS. բարեխաւսութեամբն եւս սուրբ

8 *ՁԱտ. ի ժողովումս*

9 SS. կարգաւորութիւնն

10 SS. *չիք* սուրբն

11 2. *հրամանատուութեան*